ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՌԱՋԻՆ ԱՏՅԱՆԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ
ԻՐԱՎԱՍՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ
ԱՋԱՓՆՅԱԿ-2 ՆՍՏԱՎԱՅՐ
(ՀՀ, համայնք ԵՐԵՎԱՆ, ԱՋԱՓՆՅԱԿ, ՀԱԼԱԲՅԱՆ Փ., շենք 41Ա, 10-ՐԴ ՀԱՐԿ)

ԵԴ2/8198/02/24

ՈՐՈՇՈՒՄ
Հայցադիմումը վարույթ ընդունելու մասին

14 հոկտեմբերի 2024թ. | ք. Երևան

Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանի դատավոր Գ. Վարդանյանս, քննության առնելով «ՀԵԼԻՈՆ» ՍՊ ընկերությունն ընդդեմ ՀՀ առողջապահության նախարարության՝ «ՀԵԼԻՈՆ» ՍՊ ընկերությանը գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու մասին 30.08.2024թ. թիվ 4724-Ա հրամանն անվավեր ճանաչելու պահանջի մասին հայցադիմումը վարույթ ընդունելու հարցը.

ՊԱՐԶԵՑԻ

«ՀԵԼԻՈՆ» ՍՊ ընկերության ներկայացուցիչը 2024թ. սեպտեմբերի 23-ին հայցադիմում է ներկայացրել ՀՀ Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարան ընդդեմ ՀՀ առողջապահության նախարարության՝ «ՀԵԼԻՈՆ» ՍՊ ընկերությանը գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու մասին 30.08.2024թ. թիվ 4724-Ա հրամանն անվավեր ճանաչելու պահանջի մասին:
Դատարանի 2024թ. հոկտեմբերի 9-ի որոշմամբ հայցադիմումը վերադարձվել է:
Որոշումը ստանալուց հետո՝ 2024թ. հոկտեմբերի 10-ին, հայցադիմումը կրկին ներկայացվել է դատարան:
Կրկին ներկայացված հայցադիմումը մակագրվել է դատավոր Գ. Վարդանյանին 2024թ. հոկտեմբերի 10-ին, իսկ Դատավորին հասանելի է դարձել 2024թ. հոկտեմբերի 11-ին:
Հայցադիմումը ներկայացված է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 121 և 122 հոդվածների պահանջներին համապատասխան և նույն օրենսգրքի 126 և 127

հոդվածներով սահմանված հայցադիմումի ընդունումը մերժելու կամ այն վերադարձնելու հիմքեր չկան:
Հետևաբար՝ հայցադիմումը դատարանում պետք է ընդունված համարել 2024թ. սեպտեմբերի 23-ին:
Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 124, 125, 127, 199-200, 234.5 և 234.6 հոդվածներով՝

ՈՐՈՇԵՑԻ

«ՀԵԼԻՈՆ» ՍՊ ընկերությունն ընդդեմ ՀՀ առողջապահության նախարարության՝ «ՀԵԼԻՈՆ» ՍՊ ընկերությանը գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու մասին 30.08.2024թ. թիվ 4724-Ա հրամանն անվավեր ճանաչելու պահանջի մասին, հայցադիմումն ընդունել վարույթ:
Հայցադիմումը համարել դատարան ներկայացված այն սկզբնապես ներկայացնելու օրը՝ սեպտեմբերի 23-ին:
Թիվ ԵԴ2/8198/02/24 քաղաքացիական գործով կայացվող եզրափակիչ դատական ակտը հրապարակել 2024թ. նոյեմբերի 22-ին դատական իշխանության պաշտոնական կայքի միջոցով:
Որոշումն ուժի մեջ է մտնում կայացման պահից և ենթակա չէ բողոքարկման:

Դատավոր՝ Գրիգորի Վարդանյան

Digitally signed by VARDANYAN GRIGORI 1507850611
Date: 2024.10.14 16:10:09 AMT

Տվյալ ֆայլերին կարող եք ծանոթանալ նաև մուտք գործելով "Էլեկտրոնային դատավարություն" համակարգ՝ cabinet.armlex.am